ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0002, Երևան, Պուշկինի փող. 56ա, հեռ. 53 02 62, ֆաքս 53 88 42
ombuds@ombuds.am, www.pashtpan.am

Հ.Հ. Կառավարության
Վ. Թադևոսյանին
ապահովել կատարումը
Հ.Հ. Վարչապետի Աշխ.
11.04.2018թ.

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի
Քարտուղարության ղեկավար
պարոն Տիգրան Մարտիրոսյանին
ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի օգնական
Ջուլիետա Բաղդասարյանից

ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան,

Տեղեկացնում եմ, որ ապրիլի 16-ից 19-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը Լյուբլյանայում (Սլովենիայի Հանրապետություն) մասնակցելու է Կանխարգելման ազգային մեխանիզմների եվրոպական ֆորումի շրջանակում կազմակերպված միջազգային համաժողովին:

Համաժողովը նվիրված է Սլովենիայի կանխարգելման ազգային մեխանիզմի 10-ամյակին, որի ժամանակ կքննարկվեն Կանխարգելման ազգային մեխանիզմների ազդեցության գնահատումը, ինչպես նաև ցանցի վերաբերյալ մի շարք առաջնահերթություններ :

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից, այցի նպատակով, անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել 103.000 (հարյուր երեք հազար) ՀՀ դրամ արժողությամբ հայկական արտադրանքի կոնյակներ, ինչպես նաև 12.600 (տասներկու հազար) ՀՀ դրամ արժողությամբ հուշանվեր:

Պաշտպանի օգնական՝ **Ջուլիետա Բաղդասարյան**

11 ապրիլի 2018թ.